

օտարներով և ևս հիացումին առարկայ դարձնելով հայ ճարտարապետութեան ինքնատիպ գեղեցկութիւնները :

Այնպէս որ, բացի Ամերիկայէ, ուր հայ եկեղեցիի շէնքի պէտքը պարագայական պատշաճեցումներով գոհացնելու տեսակ մը տեղական կերպ սկիզբէն որդեգրուած էր այլևս, Թուրքիայէն դուրս ուրիշ զրեթէ ամէն տեղ, սոյն թուակահէն վերջը, աղբային եկեղեցիներու շինութեան աւելի միշտ մտածուած էր աղբային ճարտարապետական ոճի վրայ. այսպէս, Բարիդի մէջ նախ, 1901-ին Ս. Յովհ. Մկրտիչ, յետոյ Պուքրէշի Ս. Հրեշտակապետ 1914-ին, ապա 1922-ին, Լոնտոնի Ս. Սարգիս եկեղեցիներու կառուցման ատեն :

Գրիգոր Եղիայեանի մահէն վերջը, իր փափաքին մարմին տալու առաջին գործողութեանց միջոցին ևս, Եգիպտոսի Աղբային Վարչութիւնը և կտակարար Պօղոս Փաշա Նուպար անդրադարձած էին այդ կէտին. 1914-ին պատրաստուած գեղեցիկ ուրուագիծ մը խաղաղաւուծ էր ամէնքը, և հաւանաբար նոյն այդ ծրագիրը պիտի գործադրուած ըլլար, եթէ վերահաս պատերազմին պատճառաւ գործը ինքնին յետաձգուած չըլլար :

Տասը տարիներ ետքը, 1924-ին, երբ պատկանեալ մարմինները արդէն կ'ըբաղէին շինութեան գործով, մասնաւորապէս կտակատարին Բարիդ գանուելուն բերմամբ, տաղանդաւոր Պ. Լեւոն Նաֆիլեանի կ'վիճակէր Եղիայեան եկեղեցիին ճարտարապետութիւնը :

Յատակագիծը, կտարեալ յաջողութիւն հայկական ոճի, ընդունուեցաւ Գահիրէի Թեմականի 1924 Սեպտեմբեր 17-ի նիստին մէջ :

#### ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԵՒ ՆՈՒԹԵԱՆ

Քաղաքական ժողովը 1924 Ապրիլ 30-ի նիստի մէջ ընտրեց Շինութեան Յանձնաժողովը, Աւաջնորդի նախագահութեան տակ : Զայն կ'կազմէին հետեւեալ աղբայինները .

Տեարք՝ Հայկ Ինայէթեան (Ատենապետ)

Տօքթ. Նազարէթ Քէչէճեան (Ատենադպիր)

Գէորգ Ակոբովիչ